ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԳՈՇ ԳՅՈՒՂԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

ԱՎԵՏՅԱՆ Վ. Վ.

Տավուշի մարզի Գոշ գյուղը հանրահայտ է ոչ միայն միջնադարյան Նոր Գետիկի կամ Գոշավանքի անզուգական պատմաճարտարապետական հուշարձան-համալիրով, ասեղնագործ հիշեցնող զարդարուն խաչքարերով, Մխիթար Գոշի դամբարանով, այլև բրոնզեդարյան հուշարձաններով:

Բրոնզեդարյան նյութերի մեջ կան անդրկովկասյան տիպի բրոնզե սակըր, ապարանջաններ և ուշ բրոնզեդարյան խեցեղենի նմուշներ, որոնք պահվում են Գոշավանքի ոչ մեծ թանգարանում: Դրանք այլ նյութերի հետ հայտնաբերվել են պատահաբար՝ գյուղի տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ: Առանձնապես կարևոր են նորահայտ ժայռապատկերները, որոնք հայտնաբերել ենք 1985 թ. օգոստոսին, գյուղից 2,5 կմ հյուսիս-արևմուտք, Դիլանկի բլուր կոչվող վայրում:

Գտնված ժայռապատկերակիր քարերը չորսն են, որոնք ոռոգման աշխատանքների ժամանակ տեղահան են արվել և խառնիխուռն ընկած էին հողամասի միջնակներում կուտակված քարակույտերի մեջ: Դրանցից մեկն ունի 1,3 մ երկարություն, 1,1 մ հաստություն, որի 70 սմ լայնությամբ հարթ մակերեսին դրվագված է թանձր ստվերագծերով 10 պատկեր՝ երկու խմբով: Ձախակողմյան խմբում նկատելի են վայրի այծի և անտառային եղջերուի 6 պատկեր. հինգը՝ կանգնած, երկուսը՝ նստած վիճակում: Աջակողմյան խմբանկարն առնված է շրջանի մեջ, որով և առանձնանում է ձախակողմյան խմբից:

Շրջանի մեջ աչքի է ընկնում ձախ եզրին արված սեղանաձև՝ երկրաչափական բնույթի պատկերը, որի մակերեսով լայնակի տարված են հաստ, սեղանի կողերն իրար միացնող ակոսագծեր: Սեղանաձև պատկերի շուրջ կան կենդանիների՝ հավանաբար այծերի կամ եղջերուների հողմահարված, դժվար ընկալելի պատկերներ (նկ. 1):



Նկ. 1



Նկ. 2

Երկրորդ քարի վրա, որն ունի 35x40 սմ մակերես, պատկերված է գրեթե ամբողջ մարմնի երկարությամբ հետ գնացող եղջյուրներով այծ՝ արածելու կամ ջուր խմելու պահին (նկ. 2):



Նկ. 3

Նկ. 4

Երրորդ՝ նույն չափի քարին պատկերված է ուղիղ, վեր բարձրացող եղջյուրներով կենդանի, որին կարելի է նմանեցնել այծի կամ արու եղնիկի (նկ. 3)։

Չորրորդ՝ դարձյալ նույն չափի քարի վրա պատկերված կենդանին հավանաբար ցուլ է, թվում է, թե առջևի ոտքերով, գուցե եղջյուրներով քանդում է գետինը. այդպես են վարվում ցլերը՝ վտանգի ժամանակ (նկ. 4)։

Նշված ժայռապատկերները գտնվել են որոնողական աշխատանքների ժամանակ, սակայն տեղանքն ամբողջովին չի ուսումնասիրվել։ Բացի ժայռապատկերներից, նույն տարածքում հայտնաբերվել է մի ընդարձակ, մոտ 1 հա տարածությամբ դամբարանադաշտ։ Ցավոք, ոռոգման աշխատանքների ժամանակ տեղանքը հարթվել է, տեղ-տեղ երևում են դամբարանների ծածկերի սալաքարերը։

Դատելով դամբարանների հետքերից՝ դրանք գետնափոսային (հնափոսային) տիպի են. սրանց տարածքից հայտնաբերվել են գունազարդ խեցեղենի մանր բեկորներ։

Նշված դամբարանադաշտը և ժայռապատկերները, նախնական ուսումնասիրությունների հիման վրա, կարելի է թվագրել մ.թ.ա. II հազարամյակի սկզբներով՝ միջին բրոնզի դարով։ Հարկ է նշել, որ Աղստևի հովտում կան մի շարք հին հուշարձաններ (մ.թ.ա. XVI - XII դդ.), որոնք առ այսօր ուսումնասիրված չեն։ Այսպես, Կույբիշև գյուղից 1 կմ հարավ-արևելք, Աղստև գետի աջակողմյան՝ *Ալդրի հողեր* կոչվող վայրում, Դիլիջան քաղաքի աերացիոն կայանի շինարարության ժամանակ, հողային աշխատանքներ կատարելիս, 1982 թ. բացվել են դամբարաններ, որտեղ ստուգողական պեղումներ է կատարել Օնիկ Խնկիկյանը։

Մեր դիտումների ընթացքում նկատվեցին մի քանի անեղծ և կիսավեր դամբարաններ։ Կիսավերներից մեկի ստորին շերտում հայտնաբերվեցին գունազարդ խեցեղենի նմուշներ։ Դրանք երեք տարբեր անոթների բեկորներ էին, որոնցից մեկը դարչնակարմիր ներկով էր և սև մելանով նախշազարդված, երկրորդի մուգ կարմիր հենքի վրա սև մելանով արված էին երկու սվաստիկա, իսկ երրորդ՝ մուգ կարմիր փայլաներկով բեկորը պատված էր սև մելանով արված պարույրներով։

Հայտնաբերվեց նաև ջարդված, բայց լրիվ պահպանված բեկորներով, խամրած կարմիր գույնի մեծ սափոր, որի վզի մասում կային վերից վար արված գծանախշեր։ Սրանց հետ կային օքրայի մնացորդներ, մարդակմախքի բեկորներ և մոխիր։

Ալդրի հողերից հարավ, անտառապատ բլուրների վրա գտնվող հին գյուղատեղիում, որը հայտնի է Աչգեղատեղ անվամբ (տեղական բարբառով՝ աշուղի գյուղատեղ), կան միջնադարյան գերեզմաններ՝ առանց տապանագրերի, խաչքարեր և գետաքարով շարված կիսավեր եկեղեցի: Բնակարաններից մեկի ավերակներից տեղացիները գտել են բյուզանդական պղնձե ութ դրամ:

Գյուղատեղիում կան նաև հին դամբարաններ, որոնց հետքերը հազիվ են նշմարվում: Դրանցից մեկի ստուգողական պեղումների ժամանակ հայտնաբերվեցին գորշ և սև փայլաներկով խեցեղենի, բրուտագործական դուրգի վրա պատրաստված, մեծ քանակությամբ կայծքարի անմշակ բեկորներ, կենդանիների ոսկորների մնացորդներ, ձիու ատամներ: Դամբարանադաշտից տեղացիները գտել են լավ մշակված քարե երկու գունդ: Նշված հուշարձաններն առաջնահերթ ուսումնասիրման կարիք ունեն, քանի որ դրանք արդեն հետքակորույս են լինում:

Այսպիսով, պարզվում է, որ Գոշ գյուղի շրջակայքում կան ժայռապատկերներ, բրոնզեդարյան հուշարձաններ, իսկ Աղստև գետի հովտում՝ ինչպես բրոնզեդարյան, այնպես էլ միջնադարյան հուշարձաններ, որոնք տակավին ուսումնասիրված չեն:

НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ В ОКРЕСТНОСТЯХ С. ГОШ

АВЕТЯН В. В.

Резюме

В Тавушской области РА, к северо-востоку от деревни Гош (2,5 км), на холме “Диланки” в 1985 г. были обнаружены наскальные изображения, которые схожи с ранее обнаруженными на территории Армении.

Среди них имеются изображения горных козлов, оленей, быков, а также трапециевидные геометрические знаки. Памятники бронзового и среднего веков на территории Гоша в долине реки Агстев по сей день не изучены.